



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. սեպտեմբերին /վերլուծություն/

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13232 գործարքներ, որոնց քանակը 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել է 0.9%-ով, իսկ 2008թ. օգոստոսի համեմատ՝ 1.3%-ով:

2008թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4739 օտարման գործարքների 79.4%-ը կազմել են առուվաճառքները, 19.5%-ը՝ նվիրատվությունները և 1.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 33.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.3%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. սեպտեմբերին, 2008թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 7.0%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 7.9%-ով:

2008թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.5%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 14.4%-ով:

2008թ. սեպտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	սեպտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2008թ.	օգոստոս 2008թ.
Կենտրոն	455800	486500	483600
Արաբկիր	377100	403600	412300
Քանաքեռ-Զեյթուն	282700	311400	308400
Նոր-Նորք	242800	273000	278100
Ավան	237200	272600	271100
Էրեբունի	243700	275200	275000
Շենգավիթ	254100	285500	284500
Դավթաշեն	267600	307300	297700
Աջափնյակ	248000	276000	278000
Մալաթիա-Սեբաստիա	236900	259400	265400
Նուբարաշեն	127400	160000	155100
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	270300	301000	300800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. սեպտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. օգոստոսի համեմատ աճել են 0.1 %-ով:

2008թ. սեպտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 388 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. օգոստոսի համեմատ աճել է 5.4%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 28.4%-ով:

2008թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2008թ.	օգոստոս 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	110900	140100	140000
	Ապարան	29000	35700	35000
	Թալին	38600	45800	44800
Արարատ	Արտաշատ	89000	107600	107400

	Մասիս	103200	132700	132500
	Վեդի	65100	83200	83000
	Արարատ	57700	67000	64300
Արմավիր	Վաղարշապատ	132500	171600	171300
	Արմավիր	99800	128700	128200
	Մեծամոր	63100	86000	85900
Գեղարքունիք	Սևան	67200	102300	100900
	Գավառ	36100	50000	49900
	Մարտունի	54200	69000	68900
	Վարդենիս	26300	32900	32800
	Ճամբարակ	15300	16500	16400
Լոռի	Վանաձոր	76400	102000	101800
	Ստեփանավան	39300	48700	47600
	Սպիտակ	47500	62700	62600
	Ալավերդի	26800	32600	32500
	Տաշիր	27000	32900	32800
	Թումանյան	5400	5600	5600
	Շամլուղ	3100	3200	3200
	Ախթալա	12000	13000	13000
Կոտայք	Աբովյան	150200	177100	177000
	Նոր Հաճն	106700	132400	132300
	Բյուրեղավան	76400	113000	109500
	Եղվարդ	96800	127200	122500
	Հրազդան	55700	72000	71900
	Ծաղկաձոր	105600	164500	164300
	Չարենցավան	66000	95200	95100
Շիրակ	Գյումրի	75600	113600	109700
	Արթիկ	47500	57300	57200
	Մարտիկ	25700	28100	27400
Սյունիք	Գորիս	75100	114200	113000
	Կապան	70700	99000	95000
	Սիսիան	55100	81600	78500
	Մեղրի	40800	49200	47700
	Ագարակ	25800	29500	29400
	Քաջարան	37100	53500	52000
	Դաստակերտ	7000	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	64600	80500	78000
	Եղեգնաձոր	80100	101800	101700
	Ջերմուկ	114600	135800	130600
Տավուշ	Դիլիջան	72000	105900	101700
	Իջևան	94400	136500	130500
	Բերդ	35000	40600	39800
	Նոյեմբերյան	28800	31200	30100
	Այրում	21000	21100	21100

2008թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. օգոստոսի համեմատ աճել են 1.5%-ով:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 458 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 109, մյուս մարզերում միասին վերցրած՝ 349: 2008թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է՝ 11.2%-ով, ընդ որում Երևանում՝ 11.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 11.1%-ով: 2007թ.

սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 22.8%-ով, ընդ որում Երևանում՝ 37.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 16.5%-ով:

2008թ. սեպտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	սեպտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2008թ.	օգոստոս 2008թ.
Կենտրոն	472300	506700	504700
Արաբկիր	390500	437400	436400
Քանաքեռ Զեյթուն	287200	322900	320700
Նորք Մարաշ	243000	304400	298900
Ավան	242700	288000	284700
Էրեբունի	249100	288700	286900
Շենգավիթ	259800	292000	291000
Դավթաշեն	272600	322700	316000
Աջափնյակ	254800	299400	295400
Մալաթիա-Սեբաստիա	240200	291200	284400
Նուբարաշեն	131400	163900	161700
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	276700	319800	316400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. սեպտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. օգոստոսի համեմատ աճել են 1.1%-ով:

2008թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2007թ.	սեպտեմբեր 2008թ.	օգոստոս 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	115700	144400	144200
	Ապարան	33500	38600	38300
	Թալին	42300	48400	48200
Արարատ	Արտաշատ	93900	110900	108900
	Մասիս	106700	139100	138900
	Վեդի	66900	91500	91300
Արմավիր	Արարատ	62700	68200	66700
	Վաղարշապատ	137600	176700	176400
	Արմավիր	102000	131900	129700
	Սևան	69200	104800	102800

Գեղարքունիք	Գավառ	40100	52900	51600
	Մարտունի	56500	77000	76600
	Վարդենիս	30600	36600	35800
	Ճամբարակ	18700	21000	21000
Լոռի	Վանաձոր	82500	107900	104800
	Ստեփանավան	43200	53300	52700
	Սպիտակ	50800	67300	67000
	Ալավերդի	29900	36900	36100
	Տաշիր	29000	37300	36500
	Թումանյան	8600	10300	10200
	Շամլուղ	5700	7300	7300
	Ախթալա	15000	16200	16000
Կոտայք	Արուսյան	156300	191000	190000
	Նոր Հաճն	112800	141200	138900
	Բյուրեղավան	79500	117900	114700
	Եղվարդ	99700	132800	130300
	Հրազդան	58600	78500	76700
	Ծաղկաձոր	153400	260800	252800
	Չարենցավան	70100	99700	99400
Շիրակ	Գյումրի	81200	116000	110900
	Արթիկ	50400	61900	60700
	Մարալիկ	28900	32500	32200
Սյունիք	Գորիս	80500	123400	120300
	Կապան	75000	101800	97000
	Սիսիան	58300	83400	81200
	Մեղրի	43000	50600	50200
	Ագարակ	27800	33100	32800
	Դաստակերտ	9700	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	66300	82700	80900
	Եղեգնաձոր	84200	104700	104000
	Ջերմուկ	60600	95800	91300
Տավուշ	Դիլիջան	76400	115000	110000
	Իջևան	98800	138100	131800
	Բերդ	38400	41800	41400
	Նոյեմբերյան	33400	36100	35900
	Այրում	22800	23000	23000

2008թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. օգոստոսի համեմատ աճել են 1.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 1900 միավոր /2313.04 հա/ հողեր, որից Երևանում՝ 94 միավոր /6.72 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 27 միավոր /1.96 հա/ հողեր, որից Երևանում՝ 7 միավոր /0.64 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 723 միավոր /2201.48 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.83 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 792 միավոր /76.48 հա/, որից Երևանում՝ 65 միավոր /4.48 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 345 միավոր /20.77 հա/, որից Երևանում՝ 23 միավոր /1.09 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 27 միավոր /12.30 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.32 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 11 միավոր /1.86 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.15 հա/

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1705 միավորի /2261.97 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 65 միավոր /4.47 հա/, նվիրատվության գործարքներ՝ 173 միավորի /47.33 հա/, որից Երևանում՝ 26 միավոր /2.09 հա/ և փոխանակության գործարքներ՝ 22 միավորի /3.74 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.16 հա/:

Հանրապետությունում 2008թ. սեպտեմբերին, 2007թ. սեպտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 15.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել՝ 7.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 28.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1425.35 հա, որից 1413.27 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 39.3%-ը կամ 670 գործարքներ /551.27 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 16 գործարքներ /1.21 հա/, իսկ 60.6%-ը կամ 1034 միավորը /1710.51 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 49 միավոր /3.26 հա/:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք /0.18 հա/:

Ստորև ներկայացվում է 2008թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	2	0.32	6	0.47	8	0.42	3	0.78	0	0.00	34	1.93	12	0.55
Արագածոտն	66	237.65	1	1.01	7	0.84	35	1.88	48	102.53	0	0.00	64	5.21	8	0.70
Արարատ	12	18.83	7	1.26	67	5.43	27	0.85	54	35.05	1	0.40	80	6.91	5	0.13
Արմավիր	18	81.57	1	0.57	0	0.00	28	1.09	100	1331.70	0	0.00	104	10.04	8	0.38
Գեղարքունիք	11	42.32	3	2.89	25	2.60	10	0.47	25	31.45	0	0.00	9	1.24	5	0.40
Լոռի	5	3.14	1	2.27	12	0.88	23	0.60	40	24.12	0	0.00	13	0.89	14	0.95
Կոտայք	57	106.43	1	0.40	32	1.98	49	4.74	127	77.93	0	0.00	136	11.43	25	3.54
Շիրակ	8	5.07	3	1.78	35	1.26	24	0.40	19	31.39	1	0.13	6	0.60	8	0.39
Սյունիք	1	0.57	0	0.00	0	0.00	7	0.30	23	19.87	1	0.20	5	0.45	2	0.01

Վայոց Ձոր	3	3.59	1	0.03	30	2.25	18	0.09	6	1.71	0	0.00	18	1.60	2	0.10
Տավուշ	4	10.96	4	1.04	5	0.31	10	2.24	8	3.63	0	0.00	9	0.83	2	0.004
Ընդամենը	185	510.13	24	11.57	219	16.02	239	13.08	453	1660.16	3	0.73	478	41.13	91	7.15

Ստորև ներկայացվում է 2008թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	13	0.84	2	0.32	4	0.20	7	0.32	3	0.37	0	0.00	0	0.00	2	0.27	1	0.10
Արագածոտն	4	0.03	0	0.00	0	0.00	4	0.03	105	241.35	66	237.65	1	1.01	7	0.84	31	1.85
Արարատ	8	0.33	3	0.08	2	0.14	3	0.11	105	26.04	12	18.83	4	1.18	65	5.29	24	0.74
Արմավիր	9	0.03	0	0.00	0	0.00	9	0.03	38	83.20	18	81.57	1	0.57	0	0.00	19	1.06
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	49	48.28	11	42.32	3	2.89	25	2.60	10	0.47
Լոռի	12	0.24	0	0.00	3	0.13	9	0.11	29	6.64	5	3.14	1	2.27	9	0.74	14	0.49
Կոտայք	12	0.69	0	0.00	0	0.00	12	0.69	125	112.59	55	106.16	1	0.40	32	1.98	37	4.05
Շիրակ	8	1.41	1	1.20	5	0.16	2	0.05	62	7.11	8	5.07	2	0.58	30	1.10	22	0.36
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	0.87	1	0.57	0	0.00	0	0.00	7	0.30
Վայոց Ձոր	2	0.03	0	0.00	0	0.00	2	0.03	50	5.93	3	3.59	1	0.03	30	2.25	16	0.06
Տավուշ	5	0.35	0	0.00	3	0.15	2	0.20	18	14.20	4	10.96	4	1.04	2	0.16	8	2.04
Ընդամենը	73	3.95	6	1.60	17	0.78	50	1.57	592	546.58	183	509.86	18	9.97	202	15.23	189	11.52

Հանրապետությունում 2008թ. սեպտեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք /0.27 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. սեպտեմբերին 2007թ. սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 9.3%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 84.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 7.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն նվազել է 31.7%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 49.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 17.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 80.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. սեպտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակ	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակ	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	46	135.27	34.4	1221.7	204.6	31	24.72	365.0	12000.0	3621.5
Ապարան						3	0.36	86.5	2727.3	462.3
Թալին	20	102.38	32.0	143.7	60.4	13	76.52	93.6	5494.5	486.5
Ծաղկաձոր						1	0.94	79.5	1000.0	205.4
Արարատի մարզ										
Արտաշատ	1	0.16	529.0	529.0	529.0	18	4.81	335.1	10833.3	1896.8
Մասիս	8	15.54	67.1	600.0	417.2	15	20.93	200.0	11904.8	2425.2
Վեդի	3	3.14	62.5	108.3	81.9	20	9.13	207.0	10795.1	1655.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	27.87	31.1	1059.5	279.7	24	37.62	294.3	9090.0	1135.4
Բաղրամյան	11	51.56	35.4	622.1	110.2	24	1260.03	90.6	2561.1	660.9
Վաղարշապատ	2	2.14	889.7	1009.0	949.4	51	32.98	444.4	11764.7	2146.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						7	0.34	199.8	1875.0	422.2
Ճամբարակ						12	10.59	60.5	953.3	192.5
Մարտունի								51.1	2850.0	522.5
Սևան						1	0.19	52.2	2134.8	212.5
Վարդենիս	11	42.32	93.3	440.0	234.8	5	20.33	41.2	2575.1	314.9
Լոռու մարզ										
Այվերդի	1	1.04	446.6	446.6	446.6	5	1.69	170.4	6424.2	1144.0
Գուգարք	4	2.10	366.4	1120.7	753.8	12	7.67	234.6	6065.9	1005.8
Սպիտակ						7	3.51	250.0	5555.5	558.5
Ստեփանավան						13	10.41	90.6	1686.6	410.0
Տաշիր						3	0.85	45.3	1384.4	218.2
Կոտայքի մարզ										
Արվյան	12	32.59	67.5	359.2	153.6	54	32.87	279.3	11942.7	4342.0
Եղվարդ	31	50.03	49.8	437.0	171.5	70	42.17	174.4	11971.8	3050.8
Հրազդան	12	23.55	39.2	747.5	364.8	3	2.89	130.5	10256.4	1241.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	3.83	105.0	792.0	467.0	5	5.87	252.0	1693.1	485.5
Ամասիա								40.9	261.0	125.8
Անի								110.6	546.9	275.7
Աշոցք	1	1.24	313.0	313.0	313.0	4	5.99	58.5	215.8	120.3
Արթիկ						10	19.54	79.4	1428.6	191.5
Սյունիքի մարզ										
Գորիս						13	6.41	92.6	1023.2	414.5
Կապան	1	0.57	340.7	340.7	340.7			120.0	841.6	254.4
Մեղրի								193.0	3000.0	554.8
Սիսիան						10	13.46	46.3	1977.4	278.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	3.59	39.1	201.3	96.8	6	1.71	125.0	10000.0	1385.5
Վայք								58.8	1430.7	526.2
Տավուշի մարզ										
Բերդ								213.3	3783.8	418.2
Իջևան	4	10.96	371.0	377.6	372.9	2	2.49	267.5	9454.5	920.5
Նոյեմբերյան						6	1.14	46.7	7368.4	643.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. սեպտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների

վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	3610.0	174.4	175.0	174.8	59	45234.0	130.7	22200.0	2572.8
Ապարան						3	2365.0	124.1	609.6	222.1
Թային						2	4540.0	63.2	1454.8	112.5
Ծաղկահովիտ	4	4800.0	70.8	70.8	70.8			60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ	20	21026.0	269.0	820.0	299.7	16	15952.0	173.9	7140.3	926.9
Մալիս	45	31901.0	292.3	1586.8	395.9	51	40270.0	187.5	25000.0	1216.4
Վեդի						13	12920.0	126.1	5000.0	680.1
Արմավիրի մարզ										
Արմավիր						32	39297.0	131.6	9090.9	1220.0
Բաղրամյան						1	600.0	100.0	833.3	155.1
Վաղարշապատ						70	60005.0	197.4	26528.4	1550.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	3900.0	186.6	1084.3	394.5
Ճամբարակ								71.3	2286.2	107.0
Մարտունի	2	816.0	118.4	118.4	118.4	2	2680.0	119.3	5000.0	272.5
Սևան	23	25149.0	428.4	596.9	483.3	1	1000.0	240.0	3110.4	185.5
Վարդենիս						2	4841.0	72.5	987.2	132.8
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	148.9
Գուգարք	4	2176.0	523.9	4750.2	2396.5	10	5216.0	77.9	14083.3	618.7
Սյիտակ						2	2950.0	104.9	1348.3	150.0
Ստեփանավան	5	5250.0	72.7	412.4	229.4			88.2	1666.7	119.2
Տաշիր						1	773.0	45.3	400.0	71.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	25	13811.0	410.0	1764.0	1373.6	66	53215.0	264.5	35353.5	2075.4
Եղվարդ	2	1020.0	1485.3	1497.3	1491.3	55	44255.0	173.6	27000.0	2292.0
Հրազդան	5	5000.0	393.0	403.0	395.0	15	16871.0	117.7	34848.5	1352.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	24	7791.0	70.0	4444.7	1662.6	3	2340.0	113.6	18750.0	332.8
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի						1	1240.0	67.9	180.6	101.0
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	6	3230.0	65.6	540.3	241.9	2	2400.0	111.8	5000.0	195.5
Սյունիքի մարզ										
Գորիս						4	3875.0	112.2	1700.0	260.0
Կապան						1	600.0	67.9	2638.9	218.8
Մեղրի								68.5	632.9	134.1
Միսիան								123.5	875.0	152.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	6580.0	96.7	7659.6	333.0
Վայք	30	22500.0	126.0	854.0	829.7	12	9000.0	120.7	1448.3	129.0

Տավուշի մարզ										
Բերդ						1	467.0	75.8	810.0	90.0
Իջևան	2	1608.0	2300.0	2300.0	2300.0	7	6861.0	74.1	14423.1	476.9
Նոյեմբերյան						1	1020.0	125.0	1948.1	148.0

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 3 գործարքներ 0.24 հա մակերեսով, ընդ որում 1-ական՝ /0.07 հա/ Արարատի, /0.06 հա/ Գեղարքունիքի, /0.11/ Լոռու մարզերում:

2008թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 859 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 49.6%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. սեպտեմբերին 2008թ. սեպտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 3.5%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 11.6%-ով:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 49 բնակարանների, 56 անհատական բնակելի տների, 328 հասարակական, 54 արտադրական նշանակության օբյեկտների, 350 միավոր /7107.62 հա/ հողերի և 22 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 19 վարձակալության գործարքների /այդ թվում 8 միավոր /0.13 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. օգոստոսի համեմատ նվազել է 26.9%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ՝ 5.0%-ով:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 7107.62 հա հողերից 1.06 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 7106.56 հա հողերի 19.01 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.02 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4653.94 հա, որից 4653.54 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2122.80 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. սեպտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	8	14.25
Արարատ	3	1200.00	16	24.56
Արմավիր	0	0.00	3	6.79
Գեղարքունիք	2	321.30	14	7.98
Լոռի	0	0.00	0	0.00
Կոտայք	1	90.00	25	106.00

Շիրակ	3	430.00	14	163.81
Սյունիք	1	80.00	30	4573.54
Վայոց Ձոր	1	1.50	1	0.15
Տավուշ	0	0.00	0	0.00
Ընդամենը	11	2122.80	111	4897.08

2008թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2138 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.2%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. օգոստոսի համեմատ նվազել է 9.3%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ՝ 1.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.4%/, առանձնատների /27.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.6%/ և հողերի /12.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 883 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. օգոստոսի համեմատ աճել է 0.7%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ՝ 7.2%-ով:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 214.00 հա հողեր, որից 3.31 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 94.8%-ը կամ 202.92 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.49 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 70.96 հա, որից 69.54 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 145 գործարքներ, որից 110-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 75.2%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 17.9%-ն՝ անհատական բնակելի տների, 3.4%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.7%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.4%-ն՝ ամառանոցների և 1.4%-ը՝ հողերի նկատմամբ: 2008թ. օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 15.2 %-ով, ընդ որում Երևանում՝ 6.8%-ով, իսկ մարզերում՝ 34.0%-ով:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 4 և 2 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2008թ. օգոստոսի և 2007թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 45.5%-ով: 2008թ. սեպտեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 3-ը՝ Շիրակի, 1-ական՝ Արագածոտնի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում:

2008թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2399 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. օգոստոսի համեմատ աճել է 10.5%-ով, իսկ 2007թ. սեպտեմբերի համեմատ՝ 1.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /25.3%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն